

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31-ի գիշերը, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, Ճեմարանի դահլիճում, ամանորի ավանդական սեղանների շուրջ հավաքված, հրաժեշտ տվեց անցնող հին՝ 1956 տարվան, և նոր եռանդով, նոր հույզերով ու խոհերով և ազնիվ ցանկություններով դիմավորեց 1957 նոր տարին։

Երեկոյան ժամը 8-ին Հոգևոր Ճեմարան ժամանեց Վեհափառ Հայրապետը, որն ընդունվեց որոտընդոստ ծափահարություններով։ Վեհափառը նախագահեց ամանորի սեղանին։

Հոգևոր Ճեմարանի տեսչության հրավերով ընդունելության ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Վեհամայրը, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի ամբողջ պաշտոնեությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը։

Ամանորի սեղանների շուրջ հավաքված, սիրով ու երախտագիտությամբ շրջապատած իրենց սիրելի Հայրապետին, Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի ուսանողությունը և բոլոր ներկաները խանդավառ մթնոլորտի մեջ, ուրախությամբ դիմավորում էին նոր տարին։

Ճեմարանում ամանորի առթիվ կազմակերպված այս երեկույթն ուներ նաև գեղարվեստական բաժին։ Եղան երգ, նվագ, արտասանություն, ճառ։

Ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի անունից փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը սրտագին բարեմաղթություններով շնորհավորեց Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, միաբանության և բոլոր ներկաների նոր տարին, մասնավոր շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, որ բարեհաճել էր անձամբ նախագահել և սեղանակից լինել Միաբանության և ուսանողության նոր տարվա առթիվ կազմակերպված սեղանին։

Ա դասարանի ուսանողներ Ն. Պալյանը և Ա. Սահակյանը ջերմորեն արտասանեցին նոր տարվան նվիրված բանաստեղծություններ, առաջինը Արամ Արմանի «Նոր տարին», իսկ երկրորդը՝ ռուսերեն։ Գ լսարանի ուսանող Իշխան Մելքոնյանը ապրումով արտասանեց Գեղամ Սարյանի «Օրացույցը»։

Ճեմարանի երգչախումբը, պ. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, մեծ հաջողությամբ կատարեց մի շարք քառաձայն երգեր՝ «Մայր Արաքսի», «Սոնա յար», «Իմ չինարի յարը», «Էս գիշեր», «Ցալալի», «Ցայգային» և «Լուռ գիշեր» (Մենդյան երգ)։ Գ դասարանի ուսանողներ Գրիգոր Նևրուզյանը և Վլադիմիր Քերոյանը դաշնակի և ջութակի վրա շնորհալիորեն կատարեցին մի շարք դասական նվագներ։ Ճեմարանականները իրենց արտասանություններով, երգով, նվագով ու խոսքով զվարթացնում էին ամանորի սեղանը։

Հանուն Ճեմարանի ուսանողության, Գ դասարանի աշակերտ և վերջերս Լիբանանից Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուսանելու եկած նոր ճեմարանական Սարգիս Սարգսյանը կարդաց հետևյալ հուզիչ ուղերձը.

«Աստվածարյալ Ս. Հայրապետ.

Թույլ տվեք ինձ, նոր տարվան այս բերկրառիթ և հանդիսավոր տոնին, շնորհավորել Ձեր նոր տարին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողության անունով։

Մնաղիր կաղոթենք, որ Աստված երկար կյանք, քաջառողջություն և արևշատություն պարգևե Ձեզի։

Երկար տարիներ շարունակ ամանորի այս շքեղ հանդիսության մասնակից եղած եմ օտար հողի վրա և տարբեր հորիզոնի տակ, բայց այսօր մեծ բախտավորությունը ունիմ Հայրենի սրբազան հողին վրա, Արարատի հովանիին տակ, Միածնաէջ Տաճարի ծոցին մեջ և Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետի ներկայության տոնելու այս ցնծալի երեկոն։

Տասնվեց երկար տարիներու ամանորի տոնական երեկոները ինձի այնքան ուրախալի չեն թված, որքան այս անմոռանալի երեկոն, այս ջերմաշունչ հարկին տակ։

Քիչ հետո 1956 տարին պլպլացող ճրագի մը նման պիտի մարի, և անոր պիտի հաջորդե նոր տարին, լուսաշող աստղի մը նման լուսավորելով ամբողջ տիեզերքը։

Նոր տարին իր խոհերով և պատգամներով մեր սրտերուն մեջ պիտի բոցավառե քրիստոնեական հավատքի հուրը՝ մեր միտքը մշակելու, հոգին աղնվացնելու վեհ դաղափարներով ու զգացումներով։

Ջերմագին կաղոթենք, որ Աստված Էջմիածնի լուսո անշեջ վառարանեն կայծ մը ցոլացնե մեր մտքեն ու հոգիեն ներս, որպեսզի ազգային արժանի ժառանգորդները հանդիսանանք մեր հանճարեղ և երախտաշատ հոգևորականներուն, որոնք զարգացուցին մեր գիրն ու դպրությունը ու շենցուցին մեր տաճարները։

Պիտի ուզեի կրկին Հոգևոր Ճեմարանի ուսանողության կողմե նոր տարվան առիթով մեր սիրելի Վեհափառ Հայրապետին մաղթել, որ ամենահզոր Տերը երկար կյանք և արևշատություն պարգևե, վերականգնելու և հավերժ անսասան պահելու համար հայ ժողովրդի քրիստոնեական սուրբ հավատքի անշեջ վառարան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Շնորհակալության խոսք ունինք մեր սիրելի և անխոնջ ուսուցիչներուն, որոնք իրենց ամբողջ եռանդն ու կարողությունը ի գործ կդնեն մեր հոգևոր, իմացական, բարոյական դաստիարակության վեհ գործի համար։

Շնորհակալության խոսք նաև Մայր Աթոռի միաբաններուն, որոնք Ղևոնդներու օրինակով կձգտին ստեղծել հայրենասիրական և եկեղեցասիրական բարձր զգացումներ մեր հոգիներուն ներս։

Վեհափառ Հայրապետ, նոր տարվան հետ Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը կխոստանա իր ամբողջ ճիգերը ի գործ դնել, լավ ուսանելու և ուման գործին մեջ փայլուն արդյունքներու հասնելու համար։

Հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության սրտանց կշնորհավորեմ այստեղ ներկա գտնվող բոլոր հարազատներուն նոր տարին։

Շնորհավոր նոր տարի»։

Ընդունելության ժամանակ ջերմ, հուզիչ ելույթներ ունեցան Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, պրոֆ. Ա. Ղարիբյանը, Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հմայակ Սեդրակյանը, Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և ուրիշներ։

Ուսանող սարկավագների անունից բարեշնորհ Խորեն սարկավագը իր գրավոր ուղերձի մեջ ասաց.

«Վեհափառ Տե՛ր.

Թույլ տվեք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանող սարկավագների անունից շնորհավորել Ձերդ Վեհափառությանը նոր տարվա ուրախ առթիվ։ Այսօր ճիշտ մեկ տարի է անցել այն օրից, երբ Ձերդ Վեհափառության հայրական սիրալիր ներկայությամբ դարձյալ համախմբված ավանդական այս սեղանի շուրջ, թեկոխեցինք 1956 տարեթիվը։ Այսօր ավելի ուրախ, ավելի երջանիկ ենք զգում մեզ, վերստին ունենալով մեր վրա Ձեր հայրական հոգածությունն ու մշտական հովանին։

Այս մեկ տարվա ընթացքում, մեծ ու անսնահատելի են եղել Ձերդ Վեհափառության ձեռնարկած գործերը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միասնության, հոգևոր վերազարթոնքի և Մայր Աթոռի վանական, վարչական, միաբանական և շինարարական աշխատանքների ասպարեզում։ Սակայն անցնող այդ մեկ տարին ազգային-եկեղեցական տեսակետից զերծ չեղավ նաև դժվարություններից։ Մռայլ ամպեր կուտակվեցին Սիսյուրքի ազգային-եկեղեցական կյանքի վերև, վիշտ պատճառելով Ձերդ Վեհափառության։

Համոզված ենք, որ Աստուծո ողորմությամբ և հայ հավատացյալ ժողովրդի սրտագին աղոթքներով կցրվեն այդ ամպերը և նորից կփայլի պայծառ երկինքը։

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք, ավանդական այս սեղանի շուրջ, մեկ անգամ ևս հավաստիացնել Ձերդ Սրբությանը, որ մեր բոլորիս միակ մտասևեռումն է բոլորվել Ձեր շուրջ և մեր ուժերի ներած չափով, նվիրվել մեր սրբազան ուխտին ու կոչմանը, լիահույս լինելով, որ Ձերդ Վեհափառությունը մոտավոր ապագայում, համազգային հարգանքի ներքո, պատմական Վաղարշապատի մեջ, պիտի ստեղծի մի նոր ոսկեդար, Ս. Սահակ Պարթև Հայրապետի և հայ մտքի ու գրականության ջահակիր Ս. Մեսրոպ Մաշտոցի օրինակով։

Աղոթում ենք միաբերան և հայցում բարձրյալ Արարչից, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին պարգևի անսասանություն, և մեր սիրելի, իմաստուն և հայրենասեր Հայրապետին՝ երկար կյանք և արևշատություն։

Շնորհավոր նոր տարի, Վեհափառ Տե՛ր»։

Ժամերն անցնում էին ուրախ, բովանդակալից և հաճելի։

Երեկույթի վերջում միաբանության և Ճեմարանի ուսանողության ուղղված հայրապետական իմաստալից խրատական խոսեց Վեհափառ Հայրապետը։ Նորին Ս. Օծությունը նոր տարվա առթիվ թելադրեց ուսանողության և միաբանության՝ նոր տարվա հետ միասին վերանորոգվել և հոգեպես, լրջորեն ըմբռնել կաղանդի գիշերվա խորհուրդը, և սրտագին նվիրումով ծառայել Մայր Աթոռին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, մեր ժողովրդին և Հայրենիքին։

Նորին Ս. Օծությունը խոսեց ներշնչված շեշտով, հավատով, խանդավառությամբ՝ Մայր Աթոռի առաջ կանգնած կարևոր հարցերի իրագործման մասին և իր լավատեսությամբ խանդավառեց, գոտեպնդեց բոլոր ներկաներին՝ ձեռք-ձեռքի տված աշխատելու միասին հօգուտ Մայր Աթոռի։ Վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին բարեմաղթություններ արեց Մայր Աթոռի անսասանության, Հայրենիքի հզորության և աշխարհի խաղաղության համար։

Վեհափառ Հայրապետի խոսքերը խորապես հուզեցին բոլոր ներկաների սրտերն ու մտքերը, անջնջելիորեն տպավորվելով նրանց յուրաքանչյուրի հիշողության մեջ։

Վեհափառ Հայրապետը նոր տարին՝ 1957 թվականը դիմավորեց Հոգևոր Ճեմարանում իր միաբանների և որդիների հետ, բաղմամամանորի նույն սեղանի առաջ։

Ուշ գիշերին, նոր տարվան նվիրված այս նշանակալից հավաքույթը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։